ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՏՂԿԾ-Մ-2023/1
(ARMLEX համակարգի սպասարկում)

ք.Երևան 31.01.2023թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Աշոտ Ավագյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Արմեն Մանուկյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկու կողմերի միասին հիշատակելու դեպքում՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին 28.09.2020թ. կնքված անհատույց օգտագործման պայմանագրի հիման վրա Պատվիրատուի օգտագործմանը հանձնված «Արմլեքս» ծրագրի միջոցով ապահովել ՀՀ դատական բոլոր ատյանների դատարանների և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև փաստաթղթաշրջանառությունը, ապահովել այդ համագործակցության հարթակի (այսուհետ՝ Հարթակ) ամբողջական սպասարկումը՝ ներառյալ՝ ընթացիկ փոփոխություններ, արդիականացում, այլ համակարգերի հետ միացում, առաջացած բոլոր թերությունների վերացում և անհրաժեշտ այլ գործողություններ (այսուհետ՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունը և վճարել դրա դիմաց սույն պայմանագրով սահմանված չափով և կարգով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կատարողը պարտավոր է՝

2.1.1 Պատշաճ կերպով և ողջամիտ ժամկետներում մատուցել Պայմանագրի 1.1 կետով սահմանված Ծառայությունը:

2.1.2 Անհապաղ, բայց ոչ ուշ, քան դրանց հայտնաբերման օրվանից երեք օրվա ընթացքում վերացնել Պատվիրատուի կողմից հայտնաբերված թերությունները: Նշված ժամկետում թերությունները վերացնելու անհնարինության դեպքում Կատարողը պարտավոր է այդ մասին ոչ ուշ, քան դրանց հայտնաբերման օրվանից երեք օրվա ընթացքում գրավոր հայտնել Պատվիրատուին՝ նշելով եռօրյա ժամկետում թերությունները վերացնելու անհնարինության պատճառները և թերությունների

վերացման ժամկետը, որը պետք է լինի բավարար և անհրաժեշտ (ողջամիտ)՝ հայտնաբերված թերությունը վերացնելու համար:

2.1.3 Ապահովել Պայմանագրով սահմանված Ծառայության մատուցման գործընթացում Պատվիրատուից և այլ անձանցից ստացված ողջ տեղեկատվության գաղտնիությունը և առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության որևէ երրորդ անձի չտրամադրել Ծառայության մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկատվությունը:

2.1.4 Բացառել ոչ իրավասու անձանց հնարավորությունը միանալու Հարթակին, ձեռնարկել բոլոր անհրաժեշտ և հնարավոր միջոցները Պատվիրատուի կողմից իրեն տրամադրված, Ծառայության մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած կամ Հարթակում առկա որևէ այլ տեղեկատվությունը երրորդ անձանց համար անհասանելի դարձնելու, Հարթակում առկա տեղեկատվության արտահոսքը կանխելու և Պատվիրատուի իրավասու անձանցից և Հայաստանի Հանրապետության դատարաններից զատ որևէ այլ անձի՝ Հարթակին միանալը կամ Հարթակին այլ կերպ հասանելիություն ստանալը բացառելու համար:

2.1.5 Որևէ պատճառով Պատվիրատուի կողմից իրեն տրամադրված, Ծառայության մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած կամ Հարթակում առկա այլ տեղեկատվությունը երրորդ անձանց հայտնի դառնալու դեպքում անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին և կանխել դրա հետևանքով սպասվելիք վնասները:

2.1.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում Պատվիրատուի պահանջով վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.1.8 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկության գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.2 Կատարողն իրավունք ունի՝

2.2.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով և այլ պայմաններով մատուցված Ծառայությունը:

2.2.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով մատուցված և Պատվիրատուի կողմից ընդունված Ծառայության համար իրեն վճարման ենթակա գումարը:

2.2.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.2.3.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են վճարելու ժամկետները:

2.3 Պատվիրատուն պարտավոր է.

2.3.1 Կատարողի գրավոր պահանջով վերջինիս տրամադրել Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման համար անհրաժեշտ պայմաններ:

2.3.2 Քննարկել և ընդունել Պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայությունը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին՝ սահմանելով ողջամիտ ժամկետ՝ հայտնաբերված թերությունների վերացման համար. Պատվիրատուի կողմից ժամկետ չսահմանվելու դեպքում թերությունների վերացման ժամկետ է համարվում 3 օրը:

2.3.3 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները՝ սահմանված կարգով հարկային հաշիվը դուրս գրելու օրվանից 3 բանկային օրվա ընթացքում:

2.3.4 Հարթակում հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.4 Պատվիրատուն իրավունք ունի.

2.4.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:

2.4.2 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ձեռք է բերել Ծառայություն՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև այդ կապակցությամբ իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.4.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրով սահմանված պահանջներին

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը, այդ թվում՝ Կատարողի կողմից Պայմանագրի 2.1.2. կետով սահմանված ժամկետում չեն շտկվել Հարթակում հայտնաբերված թերությունները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

3.2. Յուրաքանչյուր ամսվա 3-րդ աշխատանքային օրը Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում Պայմանագրի հիման վրա նախորդող օրացուցային

ամսվա ընթացքում մատուցված ծառայություններն արտացոլող հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման համար Պատվիրատուն Կատարողին յուրաքանչյուր օրացուցային ամսվա համար վճարում է 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կողմերն իրավունք չունեն պահանջել ավելացնել կամ նվազեցնել այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման ընթացքում Պայմանագրի և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից Պատվիրատուի պահանջով գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից Պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող են հաշվարկվել և հաշվանցվել Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Պայմանագրով սահմանված տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչ 2023 թվականի հունիսի 30-ը: Պայմանագրի գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

7.2. Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքն առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության չի կարող փոխանցվել այլ անձի:

7.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Կատարողը երաշխավորում է, որ Հարթակի նոր, կատարելագործված, կամ համանման ֆունկցիա կատարող որևէ տարբերակ իր կողմից թողարկելու (գրելու) դեպքում Հայաստանի Հանրապետության տարածքում այդ ծրագրի օգտագործման բացառիկ իրավունքը համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով փոխանցվելու է Պատվիրատուին:

7.6 Պայմանագրից ծագող հարաբերությունների նկատմամբ կիրառելի իրավունքը Հայաստանի Հանրապետության իրավունքն է:

8. Կողմերի տվյալները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	**«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ**
Ք. Երևան, Հալաբյան 41/ա	**Երևան, Արաբկիրի 25 փողոց, 25 տուն**
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**ՀՎՀՀ 01555207**
Հ/Հ 900011288025	**Հ/Հ 1570003653770100**
ՀՎՀՀ 01223338	**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ